

ալ պատրաստուած են անոր, երբ այս-  
պէս ամէն դիէ իրար իւառնած բարեսի-  
րաբար գան բոլորուին քահանայական  
և քաղաքական ձնուագայթք անոր ար-  
շալցու պայծառացընելու :

## ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

### ԱԶԳԱՑԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Ի չային բարակը բութէան սկզբնաւորութէա-  
նը և յառաջանալուն պարմութիւնը :

Ի չային : — Տպագրութեան օդ-  
տակար արուեստը մեր ազգին մէջ  
ծաւալող գլխաւոր բարեխնդիր անձանց  
մէկն եղաւ Ծիլիպոսի յաջորդ ջուղայե-  
ցի Հակովը կաթուղիկոսը, որ իրեն նա-  
խորդին նօտարը Ծարեցի Ո'ատթէոս  
սարկաւագը յամի 1656 արևմուտք ղըր-  
կեց, այն օգտակար արուեստին ետևէ ըլ-  
լալու : Ո'ատթէոս Օ միւռնիայէն Ո ե-  
նետիկ անցնելով միտքը դրեր էր մէկ  
հոն կարենայ գտնել պէտք եղած գոր-  
ծաւորքը, և իր փափաքին համնիլ.  
բայց ունեցած յուսոյն փանալովը  
հարկ եղաւ որ Հոռովմ անցնի . և հոն  
երբոր բանը յաջողելու վրայ էր, Հոռով-  
մայ մէջ գտնուող ազգայինք իրեն դէմ  
ելան, զանազան պատճառներով, և իր  
օգտակար փափաքը ընդունացնացուցին .  
“ Ո քը հակառակասէր և բարիատէաց,  
ինչպէս կ'ըսէ Ծարեցին Յիսուս որդի  
գրոց պատմական յիշատակարանին մէջ,  
զրգուեցին զմեծամեծս և զժողովս, առ  
ի խափանել զայս գործ . որ և եղեն  
իսկ . . . Ո'ատթէոսի սիրտը կոտրած՝  
Հոլանտացւոց Ո'մնդերտամ քաղաքը  
անցաւ, և հոն ձարտար արուեստա-  
ւոր մը գտնելով՝ իրեք տեսակ զիր փո-  
րել տուաւ իր քովը եղած օրինակնե-  
րուն համեմատ, զորն որ Ո'ովլսէս անու-  
նով բարունապետ մը իրեն տուեր էր, որ  
կ'երևնայ թէ սիւնեցի Ո'ովլսէս կաթու-

թիկոսն ըլլայ : Ծախուցը առաւելու-  
թեան համար կրած վշտերուն վրայ՝  
Ծարեցին ուրիշ աւելի դառն նեղու-  
թիւններ ալ ունեցաւ իրեն բարենպա-  
տակ ջանիցը դէմ կեցողներէն, որոնք  
այլ և այլ զբարտութեամբ՝ բարերա-  
րաց կամաւոր տուրքն ալ խափանել կը  
ջանային . Ո'ատթէոս անոնց ամենուն  
դէմ զնելով, մասնաւոր տպարան բացաւ  
ու Յիսուս որդին տպագրել սկսաւ պատ-  
կերազարդ և ըստ կարի վայելու . բայց  
երբոր տպագրութիւնը 38երորդ թէր.  
թին էր հասեր, մահուան անկողին իյ.  
նելով վախճանեցաւ, ու այն պատճա-  
ռաւ սկսած գործը անկատար ու պարտ-  
քերը մնացին :

Ո'ն ատենները Ոսկան վարդապետին  
Ուետիս եղբայրը Ո'մնդերտամեկած էր  
վաճառականութեան պատճառաւ, ու  
Ծարեցոյն քաշած նեղութիւնները  
տեսնելով ինքնայօժար իրեն օգնական  
և ծախուցը ձեռնտու եղեր էր . ուստի  
Ո'ատթէոսի մեռնելէն ետքը ամէն բան  
անոր զլուխը մնաց . բայց վաճառակա-  
նութեան ու տպագրապետութեան ա-  
րուեստին մէջ մեծ տարբերութիւն ըլ-  
լալով, խեղջն ինչ ընելիքը չէր գիտէր:  
Իր շփոթութիւնը լաւ կ'ըլլայ որ բուն  
իր խօսքերովը լսենք “ . . . Յորժամոր  
մեռաւ, (ծարեցի Մատթէոս) ես իրեւ  
որբ մնացի Ո'մնդերտամ. վասն այն որ  
սրբագրող ոչ գոյր . բայց միայն ես էի  
կարդացող, որ չէի խիստ հմուտ . ժա-  
մանակ մի տարակուտեալ և պարապ  
մնացի . . . սկսայ մնացեալ ժի տետրն  
տպագրեցի . . . Ո'յսպէս սրբագրեցի .  
օրինակն եղի մի կողմն . մի կու նայէի  
օրինակն, մի 'ի տպագրածն . յորժամոր  
միսալ լինէր, ուղղէի . այսպէս սրբագրե-  
ցի մնացած չորեքտասան տետրն, ուսայ  
զրբագրեն . . . վասն որոյ աշխատանք  
ունիմ 'ի վերայ այս գործքիս, թէ այլ  
օգնութեամբ . . . և ուխտադիր եղեր եմ  
որ մինչ 'ի մահս . . . պիտի որ աշխատիմ  
վասն սուրբ . Ա ջմիածնուն, որ ես պատ-  
ճառ եղայ որ տպագրութեանն արհեստ,  
որ Ո'ատթէոսն այն երբ մեռաւ՝ թէ որ  
ես չէի ովլ պիտի տիրէր 'ի վերայ քերիս.

նային . Հազար մառչիլ տոր պարտք էր քերիսանսային , որ հինգ հարիւր մառչիլ չիր արժեր . . . յանձն առի յորժամ մեռաւ . . . Դարձեալ հետ սորա աստուածաշնչի գիր պիտի դուրս գայ . տիրացուն մեռաւ , դեռ քառուն կամ վաթսուն գիր չիր փորուել . դեռ երկու հարիւր քսան գիր ալ պիտի փորվել . . . , : Տպագրութիւնը խալագիր , շարուածքը անյարմար , ինչ ալ ըլլայ՝ Իւետիսի արդիւնքը մեծ եղաւ . և աւելի անոր համար որ իր անձեռնհաս տկարութիւնը , և այնպիսի մեծ գործ մը գլուխ հանելու ոյժ չունենան լաւ ձանճնալով , իր մեծ եղբօրը Ասկան վարդապետին մասնաւոր թուզթ գրեց Դամիածին , տեղն 'ի տեղը իմացընելով իր և նախորդին ամէն ըրածները , և զինքը Մանգերտամ կը հրաւիրէր : Յակովը կաթուղիկոսին ալ փափաքը այն էր որ այնպիսի չարատանջ վշտօք սկսուած գործ մը երեսի վրայ չմնայ . ուստի յօժարութեամբ հրաման տուաւ Ասկանայ երթալու . ան ալ իրմէ առաջ իր Ինդրիանեցի Լարապետ վարդապետ աշակերտը հողանտա զրկեց բաները կարգի դնելու , ինչուան որ ինքն ալ քիչ ատենէն ետեէն համարի : Լարապետ երբոր Մանգերտամ հասաւ , տեսաւ որ Իւետիս նոր գրեր փորել տուեր է Ֆունտիք Քրիստոֆլ գերմանացի ձարտարին , ուստի մէկէն անոր հետ մէկ եղած՝ Լամագրոց առաջն տպագրութիւնը ըրին յամի 1662 , որուն յիշատակարանին մէջ Իւետիս կը կոչուի վերահայու և նարգման պարանիս , և Տափակարող և առաջնորդող ամենայն գործակալաց արուեստարանիս : Ինկէ ետքը Աղմոսարան մ'ալ տպագրեցին , որուն յիշատակարանին մէջ տպարանին պատմութեամ համառուսութիւնն ըլլալով քաղելով կը դնենք . . . “ Լատարեցաւ . . . 'ի ծովապատ քաղաքիս որ կոչի Մանգերտամ . . . Լաւ արդ աղաչեմ զքեզ յիշել . . . զտէր Ասկանի բարունեաց պետի զեղապին զիմէոդորոսի որդի զլյուենեցի Ոլլանց Իւետիսն՝ որ եզեւ պատճառ յորդորելով զլյատթէոս սարկաւագն , ընծայել զայս աղնուակերտ և

ըղձալի տպագրարանս սուրբ Դամիածնի և սուրբ Արդոսի : Քամզին Ուաթէոսն 'ի հիւանդութեան իւրում , կոչեալ զլերոգրեալ Իւետիսն և խնդրէր 'ի նմանէ եօթն հարիւր և հնգետասան մառչի փոխ , զի տացէ պարտապանացն իւրոց , որք յոյժ վշաացուցեալ էին զնա . և տպեմք ասէ երկու հազար Աղմոսարանս , և հազար երկու հարիւր Ջիսուս որդիս , և վաճառեալ և զշահն նորա արացուք երկու բաժինս , ինձ և քեզ : Խակ թէ մեռայց , դու 'ի գործ արկեալ զտպարանն մինչև վճարեսցես զպարտուիմ , և զքոյն ևս առցես հանդերձ շահիւքն , և տէր եղիցի ընդ քեզ : Խզայս ոչ էառ յանձն Իւետիսն ասելով . եթէ տացես զտպարանդ յիշատակ սուրբ Դամիածնին և սուրբ Արդոսին , լինիմ քեզ ընկեր , և տամ զիոլս . և ևս աշխատիմ անձամբս 'ի տպարանիս որդանի իցեմ , և զարդիւնս դրամին իմոյ բաշխեմ վերոգրեալ սրբոցն , և յետ մահուան իմոյ զբովանդակն : Որոյ հաւանեալ Ատթէոսն , և յօժար սրտիւ արար կտակ , զի յետ մահուան իւրոյ և վճարման պարտուց երկոցունցն տացի տպագրատունն վերոյգրեալ մենաստանիցն . և ինքն չև ևս աւարտեալ զէիսուս որդին , հանգեաւ 'ի Վրիստոս : Օ որոյ զթերին լցեալ Իւետիսն , և սկսեալ բաղձանօք և փափաքմամբ տպել հազար եօթն հարիւր զեղապահոյք և գովելի Աղմոսարան . . . :

Աղմոսարանը տպագրելին ետքը Լարապետ վարդապետը տեսնելով թէ Ասկան դեռ կ'ուշանայ գալու , շարականի խազերը շինել տուաւ , և յամի 1664 այն սրբազնն երգարանին առաջին տպագրութիւնը սկսաւ : Ին ատենները Ասկան վարդապետ Դամիածնէն ելլելով Ալիկուռնայ քաղաքն է հասեր , և հոն գտնելով իր Իւետիս եղբայրը , որ վաճառականութեն համար անկէ Օմիւնիա պիտի երթար , անոր վաւերականովը տպարանը ձեռքէն առաւ , ու Մանգերտամ անյնելով , տեսաւ որ Լարապետ վարդապետը բաւեկան առաջ տարեր էր Ը արակնոցին տպագրութիւնը .

բայց որովհետեւ նօտր գիր չունէր, մասնաւոր անոնք ալ ձուլել առւաւ Ասկան՝ թէ՛ արականին, և թէ ետքը լի բառաւ ծաշունչ զրոց տպագրութեանը համար. Ետքը 1666ին Այբբենարան, ու համառօտ Քրիստոնէական ու Քէրականութիւնն մը տպագրեց : Լուսնցմէ ետքը Աստուածաշունչ զրոց առաջին տպագրութեանը ձեռք զարկաւ : Ո՞եծ գովութեանց արժանաւոր էր Ասկանայ ջանքը, և իր անխոնջ յարատեւութիւնը ուրիշ շատ ազգասիրաց քաջալերութիւն ու միաթարանք կրնայ ըլլալ. ափսոս որ մեր երանաշնորհ թարգմանիչ նախնեաց վաստակը՝ պէտք եղածին պէս մեծարելու կերպը չգիտցաւ : Խօթանասնից ընտիր ու հմուտ թարգմանութեան վրայ եղած ազնուադոյն թարգմանութե մը մէջ լատին վուլկադայէնքանի մը տարբերութիւն գտնելով, շատ տեղ ալ առանց հայերէնը լաւ հասկընալու իրեն իրաւունք սեպեց այնպիսի մեծարոյ վաստակի մէջ ձեռք խառնելու, որով նախնական թարգմանութե յարգը կորսընցուց, իրեն անձին դէմ ալ թշնամիներ զրգուեց թէ բուն ազգայիններէն և թէ հնութեան յարգը գիտցող օտարազգի իմաստուններէն, զորոնք թէ պէտ և ինքը գաստուս ու սուտակասպաս կը կոչէ, բայց իրեն ըրածն ալ դիւրաւ չարդարանար : Ասկան իր ունեցած աստուածաշունչ զրոց զըշագրացը մէջ Այրաքայ ոչ առաջին և ոչ երկրորդ թարգմանութիւնը ունենալով, Ավմիածնայ միաբան լէ հայի Ատեֆանոս արդիւնաւոր վարդապէտին յանձնէն նոր թարգմանութիւն մը ընելու ՚ի լատինականէ . ան ալ թէ պէտյօժարամտութեամբ անոր խընդիրքը կատարեց, բայց ատենին Ասկանայ ձեռքը չկընալով հասցընել, ստիպուեցաւ որ ինքը թարգմանէ . իր խօսքերէն կ'երենայ թէ նոյն զրոց ծաղկաքաղ թարգմանութիւն մը կար քովը, և թէ զայն կատարելագործեց . նոյնպէս Չորրորդ Ելք ըստած գիրքն ալ նորոդ թարգմանէց . որոնց մէջ իրեն աշխատասիրութիւնէն զատ՝ ուրիշ գովիլի բան մը չենք կրնար տեսնել . և նախնեաց թարգմա-

նութեան համար զբուցածը թէ շարադրութիւնն յուղչ գոն աղճառեալք, որդ ամենեին զբէտութիւն իրի ոչ յայտնէն, իր աշխատասիրածներուն ձիշդ կրնայ յարմարցուիլ : Լուսուածաշունչն ետքը ուրիշ զանազան տպագրութիւններ ալ ըրաւ Ասկան, հետզհետէ արուեստին կատարելագործութեանը ետևէ ըլլալով . ինչպէս Ժամագիր, Մաշտոց, Քրիստոնէան, Ապրդանայ անունով յիշուած Աղուեսագիրէ, Առվլիսի Խորենացոյ Աղյուսագիրէ, Նոր Հայուած, բայտի առաջին տպագրութիւնը . միայն թէ այս վերջինին յիշատակարանին մէջ գիտելու արժանի բան մը կայ թէ “ Խօթանասնից մէջ արտեցաւ . . . երկասիրութեամբ նուաստ Ասկանի եպիսկոպոսի . . . ՚ի տպարանի աշակերտին իմոյ Կարապետի բանի սպասաւորի . . . բայց իմովք գըրովք, իսկ արդեամբք երկոցունց քառուն նախագաղափար ( Պատգրութեան ) լեալ է իմով ձեռամբ գծեալ նոր կտակարան, զինի Հեթմոյ թագաւորին աստուածաշունչ սրբագրութեանն գաղափար, , և այն : Անք գիտեր թէ արդեօք Կարապետ վարդապէտն ալ մասնաւոր տպարան բացեր էր, թէ նոյն ուկանեան տպարանը իրեն անցաւ : Հետեւեալ տարւոյն մէջ ( 1669 ) Ասկան ուրիշ քանի մը տպագրութիւններ ալ ըրաւ, ինչպէս Աստուել Պատգամագիրէ և Զայնիադ շարական մը, որ իրեն Ամսութեր տամ ըրած տպագրութեանցը վերջինը եղաւ :

( Մասնաւու ՈՒՐԻԾ ՍԱԳԱՄ )

1 Ասկան աստուածաշունչ գիրքը լատինականին համաձայն տպագրելովք, աղդայնոց շատերուն մաքին մէջ երկրաց թիւն ձեւց եօթանամնից վաւերականութեանը վայու տարակուսելու . այն պատճառաւ համազասպեան թագէոս երեցն ալ ձառցին մէջ անոր համեմատ ըրաւ տպագրութիւնը . իրմէ ետքն ալ մեր երանաշնորհ Միսիթար արքահայրը երբոր ուղեց երկրորդ տպագրութիւն մը ընել աստուածաշունչ գրոց, աւելի ոսկանեան տպագրութեան համեմատ ըրաւ . աղդին վիճակին և ան ատենուան հանգամանացը՝ քան իր և շակերտացը իրաւացի փափաքանաց մոիկ ընելով :